

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվար-օգոստոսին կազմել են 660887.9 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 662150.7 մլն.դրամ, դրանց աճի տեմպերը 2002թ. հունվար-օգոստոսի համեմատ կազմել են 115.6-ական %:


Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել են 11.0%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2003թ. հունվար-օգոստոսի աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ	2003թ. տեսակարար կշռի տոկոսային փոփոխությունը 2002թ. նկատմամբ
	հունվար-օգոստոս			
	2002	2003		
Դրամական եկամուտներ	100	100	115.6	-
<i>որից օգտագործվել է</i>				
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	76.0	76.2	116.0	0.2
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	4.0	4.7	133.3	0.7
ավանդների հավելած	-0.2	0.8	-	1.0
արտարժույթի գնում	14.6	13.0	102.8	-1.6
այլ ծախսեր	5.8	5.5	109.5	-0.3
Դրամական ծախսեր	100.2	100.2	115.6	0.0
<i>եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ</i>	<i>-0.2</i>	<i>-0.2</i>	<i>-</i>	<i>-0.0</i>

Բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը




Աշխատանքի վարձատրություն: 2003թ. հունվար-օգոստոսին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 30777 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 20.3%-ով: Բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների տվյալների հիման վրա, կազմել է 18645 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 19.6%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը, համապատասխանաբար՝ 41420 դրամ և աճել՝ 19.7%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2003թ. հուլիսին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	հունիս	հունվար-հուլիս	հունիս	հունվար-հուլիս	հունիս	հունվար-հուլիս
Ընդամենը	33103	30398	100	100	125,3	119,3
Արդյունաբերություն	53953	51846	163,0	58,6	124,9	132,2
Գյուղատնտեսություն	26380	24239	79,7	125,4	129,3	128,1
Անտառտնտեսություն	12536	12465	37,9	243,9	78,6	98,8
Տրանսպորտ	53834	48475	162,6	62,7	128,1	114,0
Կապ	58998	55315	178,2	55,0	110,9	106,1
Շինարարություն	59112	48791	178,6	62,3	126,2	117,1
Առևտուր, հանրային սնունդ	16415	16593	49,6	183,2	92,4	79,3
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	41859	40595	126,4	74,9	108,1	121,0
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13025	13176	39,3	230,7	99,0	103,8
Կրթություն	18007	16863	54,4	180,3	126,9	121,3
Մշակույթ	14286	13250	43,2	229,4	125,3	124,3
Արվեստ	14612	13957	44,1	217,8	117,5	114,3
Գիտություն և գիտական սպասարկում	25768	22934	77,8	132,5	123,0	115,4
Վարկավորում և ապահովագրություն	106179	105821	320,8	28,7	136,6	110,5
Կառավարման ապարատ	55106	44113	166,5	68,9	146,3	118,9
Այլ	27119	26980	81,9	112,7	111,3	107,5

Աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը միջինի նկատմամբ, %



2003թ. հուլիսի վերջի դրությամբ, վերոնշյալ կազմակերպություններում աշխատավարձի ժամկետանց պարտքը (փոխանցված նախորդ տարվանից (ամսից)) կազմել է 15275586.9 հազ. դրամ, այդ թվում՝ հաշվետու ամսում՝ 4990179.1 հազ. դրամ: Վերջինս նախորդ ամսվա համեմատությամբ աճել է 3.0%-ով և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 26.6%-ով:

Անվանական միջին աշխատավարձի հարաբերակցությունը ՀՀ սահմանված նվազագույն աշխատավարձի նկատմամբ

